600.0173.22.06.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2016 թվականի №173Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N101Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին» N101Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) Կարգի 2-րդ և 3-րդ կետերում, №2 հավելվածի՝ «Տեղեկատվություն գազի փոխադրման համակարգում սեփական կարիքների համար գազի ծախսի և տեխնոլոգիական կորուստների վերաբերյալ» 2-2 և «Տեղեկատվություն գազի փոխադրման համակարգի վերաբերյալ» 2-3 ձևերում «հաջորդող ամսի 15-ը» բառերը փոխարինել «հաջորդող ամսի 25-ը» բառերով.
   2) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1 կետով.

«3.1. №2 հավելվածի 2-4 ձևով սահմանված տեղեկատվությունը ներկայացվում է ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ամսվան (ամիսներին) հաջորդող ամսի 25-ը՝ հաշվետու ամսվա համար և աճողական՝ ընթացիկ տարվա սկզբից:».

3) Կարգի 4-րդ կետում «և 3-6 ձևերով սահմանված տեղեկատվությունները ներկայացվում են» բառերը փոխարինել «ձևում սահմանված տեղեկատվությունը ներկայացվում է» բառերով.

4) Կարգի 6-րդ կետում «և 3-5» թվերը փոխարինել «, 3-5, 3-6, 3-7» թվերով.

5) Կարգի 9-րդ կետում «էլեկտրոնային տարբերակը» բառերից հետո լրացնել «՝այն ուղարկելով «Մայքրոսոֆթ Օֆիս Էքսել» (Microsoft Office Excel) ծրագրային ձևաչափով՝ e-reports@psrc.am էլեկտրոնային հասցեին» բառերը.

6) Կարգի №1 հավելվածը՝ Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ցանկը, լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1 և 10-րդ կետերով.

«

3.1	Տեղեկատվություն փոխադրված գազի վերաբերյալ (հավելված № 2, Ձև 2-4)	.	---

»,

«

10	Տեղեկատվություն բաշխվող բնական գազի և ապրանքային առաքման վերաբերյալ (հավելված № 3, Ձև 3-7)	---	.

».

7) Կարգի №1 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ցանկի 8-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

8	Տեղեկատվություն գնված գազի վերաբերյալ (հավելված № 3, Ձև 3-5)	---	.

»,

«

9	Տեղեկատվություն փոխադրված գազի վերաբերյալ (հավելված № 3, Ձև 3-6)	---	.

».

8) Կարգի №2 հավելվածի «Փոխադրվող գազի հաշվեկշիռը» 2-1, №3 հավելվածի «Բաշխվող գազի հաշվեկշիռը» 3-1, «Տեղեկատվություն գնված գազի վերաբերյալ, տեղեկատվություն փոխադրված գազի վերաբերյալ, տեղեկատվություն բաշխվող գազի և ապրանքային առաքման վերաբերյալ» 3-5 և «Տեղեկատվություն գնված և արտահանված էլեկտրաէներգիայի վերաբերյալ» 3-6 ձևերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար №1-№4 հավելվածների.

9) Կարգի №2 հավելվածը լրացնել «Տեղեկատվություն փոխադրված գազի վերաբերյալ» 2-4 ձևով, №3 հավելվածը՝ «Տեղեկատվություն բաշխվող բնական գազի և ապրանքային առաքման վերաբերյալ» 3-7 ձևով՝ համաձայն համապատասխանաբար №5 և №6 հավելվածների.

10) Կարգի №3 հավելվածի «Տեղեկատվություն բաշխվող գազի վերաբերյալ» 3-4 ձևը աղյուսակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով. «3. Սույն աղյուսակի 1-ին կետը՝ ըստ կայանների:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
22 հունիսի 2016թ.